ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» նոյեմբերի 2011թ. N-----Ա

## ՈՐՈՇՈՒՄ

### ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

**Երևան քաղաքի ավագանին *որոշում է.***

Հաստատել 2011թ. հոկտեմբերի 25-ին Երևան քաղաքում ստորագրված Երևանի և Փարիզի քաղաքապետարանների միջև բարեկամության և համագործակցության համաձայնագիրը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՓԱՐԻԶԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

**Հաշվի առնելով** Փարիզի և Երևանի քաղաքապետարանների միջև 1998թ-ի նոյեմբերի 10-ին ստորագրված համաձայնագիրը,

**Հաշվի առնելով** երկու քաղաքների ինչպես ընտրված ներկայացուցիչների, այնպես էլ վարչակազմի կողմից իրականացված փոխանակումներն ու այցելությունները,

**Հաշվի առնելով** վերջին ինստիտուցիոնալ բնույթի առաքելությունները, որոնք ուժեղացրել են կողմերի հետաքրքրությունը խորացնելու և վերամեկնարկելու հարաբերությունները երկու քաղաքների միջև,

Ստորագրող կողմերը պայմանավորվում են ստորագրել Համագործակցության նոր համաձայնագիրը՝ հետևյալ դրույթներով և պայմաններով՝

## ՀՈԴՎԱԾ 1
## ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Այս համաձայնագիրը չեղարկում և փոխարինում է 1998թ-ի նոյեմբերի 10-ին ստորագրված համաձայնագիրը, որի բովանդակությունն ամբողջությամբ իրագործված է: Համաձայնագրի առարկան է հանդիսանում Փարիզ և Երևան քաղաքների միջև համագործակցությունը, մասնավորապես՝ բարեկամական հարաբերությունների զարգացումը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տարբեր բնագավառներում:

## ՀՈԴՎԱԾ 2
## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս համաձայնագիրը հետապնդում է հետևյալ նպատակները՝

1. Փոխանակել տեղեկատվություն և փորձ քաղաքային կառավարման բազմաթիվ իրավասությունների բնագավառներում, մասնավորապես՝ ճարտարապետություն և քաղաքաշինություն, մշակույթ և համալսարանական փոխանակումներ, կենցաղային աղբի մշակում և մաքրում, փոխադրումների և տրանսպորտի քաղաքականություն, քաղաքային իրավասությունների բնագավառում ներդրումային ռազմավարության մշակման, զբոսաշրջության, քաղաքապետարանի կադրերի վերապատրաստման աջակցություն:
2. Խթանել Փարիզի և Երևանի միջև տնտեսական, առևտրային, գիտական, տեխնոլոգիական հարաբերությունների հաստատումն ու զարգացումը,

3. Խրախուսել ապագա նախագծերն ու ծրագրերը, որոնք կզարգանան կողմերի հետաքրքրություններին և կարիքներին համապատասխան, հատկապես՝ ֆրանկոֆոնիայի ոլորտում:

## ՀՈԴՎԱԾ 3
## ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս համաձայնագիրը չի նախատեսում կողմերի միջև ֆինանսական միջոցների փոխանցում:

## ՀՈԴՎԱԾ 4

## ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Երկկողմ համագործակցությունները վերահսկելու համար կստեղծվի երկու քաղաքների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ:

Երկու քաղաքներում իրականացված յուրաքանչյուր ծրագիր կվերահսկվի ընտրված մեկ ներկայացուցչի և համապատասխան բաժնի մեկ պաշտոնյայի կողմից, ովքեր իրականացման փուլերի ողջ ընթացքում կզբաղվեն համակարգման աշխատանքներով:

## ՀՈԴՎԱԾ 5
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում այն պահից, երբ Կողմերը ստանում են գործընկերության համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին գործընթացների կատարման մասին վերջին պաշտոնական գրավոր տեղեկացումը:

Իրականացման աշխատանքները կգնահատվեն կողմերի միջև հրավիրված տարեկան ժողովի ժամանակ՝ հիմք ընդունելով նախագծերի իրականացման աստիճանը:

Վերոհիշյալ դրույթներով հանդերձ՝ կողմերը պայմանավորվում են ստորագրել սույն փաստաթուղթը երկու հավասարազոր օրինակով՝ մեկը՝ ֆրանսերեն, մյուսը՝ հայերեն:

Երևան, 25 հոկտեմբերի 2011թ.

| | |
|---|---|
| **Բերտրան Դելանոե** | **Կարեն Կարապետյան** |
| **Փարիզի քաղաքապետ** | **Երևանի քաղաքապետ** |

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

# «ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ելնելով Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի և Ֆրանսիայի Հանրապետության մայրաքաղաք Փարիզի միջև երկկողմ համագործակցության ակտիվացման անհրաժեշտությունից և նպատակ ունենալով զարգացնել երկկողմ կապերը՝ անհրաժեշտ եմ համարում վերոնշյալ հուշագրի հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի և Փարիզի քաղաքապետարանների միջև բարեկամության և համագործակցության համաձայնագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի և Փարիզի քաղաքապետարանների միջև բարեկամության և համագործակցության համաձայնագիրը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2011 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի առաջանա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ